

Մայր Աթոռ Ս. Էջմիածին  
Տեղեկատվական Համակարգ  
Հեռ.: (374 10) 517 128  
Հեռախոս: (374 10) 517 301  
Էլ-փոստ: [holysee@etchmiadzin.am](mailto:holysee@etchmiadzin.am)  
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Հոկտեմբերի 3, 2008թ.*

### **Վերահրատարակություն. Կարապետ եպս. Տեր Սկրտչեան «Սուրբ Միռոնի օրհնութիւնը»**

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մյուռնօրհնության առիթով Մայր Աթոռի հրատարակչական բաժինը վերահրատարակել է 20-րդ դարի նշանավոր եկեղեցական և մեծավաստակ գիտնական Տ. Կարապետ եպիսկոպոս Տեր-Սկրտչյանի «Ս. Միռոնի օրհնութիւնը» ուսումնասիրությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1912 թ. «Արարատ» ամսագրում: Ուսումնասիրությունը վերահրատարակության է պատրաստել Մայր Աթոռի արխիվի և թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

Կարապետ Սրբազանն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է Հին և Նոր Կտակարաններում օծության յուրի մասին հիշատակություններին, բացատրում Մյուռնի խորհուրդը, նրա գործածությունը Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգում՝ ընդգծելով Ս. Մյուռնի նշանակությունը մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում:

Գրքում իբրև հավելված ներկայացված են Ս. Մյուռնի օրհնության երեք սրբությունների՝ Կենաց փայտի մասունքով Ս. խաչի. աստվածամուխ Ս. Գեղարդի և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի, ինչպես նաև Մյուռնօրհների ժամանակ գործածվող որոշ սրբազան մասունքների և առարկաների 23 լուսանկարներ:

###